«Եթե ռուսները չլինեին, թուրքերը չէին մտնի...»

Գետաշենի պաշտպանական հայտնի մարտերից հետո, անհրաժեշտություն առաջացավ գյուղի երեխաներին, կանանց ու ծերերին տեղափոխել համեմատաբար ապահով հայկական վայրերը: Մայիսի 4-ի գիշերը, ժամը 12:00-ից մինչեւ 1:00, Ստեփանակերտ մտան առաջին ավտոբուսները, կորքի ուղեկցությամբ, օդակայանից բերելով 95 գետաշենցու: Քաղաքի հրապարակում սպասող բնակչությունը նրանց տեղավորեց իրենց բնակարաններում: Առավոտյան նրանք խռնված էին մարզգործկոմի շենքի շուրջն ու ներսում:

«Վստահ կարող եմ ասել, որ Ադրբեջանն այդքան ուժ չունի, որ մեն-մենակ վերցնի Գետաշենը,- ասում է լրագրող Լեւոն Շահնազարյանը, որը դեպքերի ականատեսներից է,- ադրբեջանական ղեկավարությունը փաստորեն հաջող կերպով օգտագործեց խորհրդային կորքերին, ապրիլի 30-ի առավոտյան ժամը 05:30-ին շրջափակելով Գետաշենն ու Մարտունաշենը 23-րդ դիվիզիայով, 140-ից ավելի զրահամեքենաներով, ուղղաթիռներով: Բոլոր տեսակի զենքեր են գործադրվել երկու գյուղերի դեմ: Տանկերով ու զրահամեքենաներով մտել են գյուղ, եւ ամեն մի տան մեջ կատարվող շարժումը առիթ է հանդիսացել այն գնդակոծելու: Ազերին-ֆորմը հաղորդել է, թե հայերը 14 վինվորականներ են գերի վերցրել, պատվար օգտագործելով կանանց եւ երեխաներին (այսինքն նրանց առաջ են մղել, որ վինվորականները չկրակեն ու թակարդն ընկնեն): Դա սուտ է, որովհետեւ գյուղ մտած վինվորները կին ու երեխա չէին հարցնում, կրակում էին աջ ու ձախ: Այդ կորքի 60 տոկոսը ադրբեջանցիներ էին: Մայիսի 1-ի գիշերը արդեն գնդակոծեցին Մարտունաշենը, մինչ այդ կորքերը կտրել էին երկու գյուղերի կապը: Ժողովրդի մի մասը սըփռվեց անտառներում, մի մասն էլ գնաց Գետաշեն»:

Շատ բան են վկայում նաեւ տեղահանվածները:

«Ես գետաշենցի եմ,- սկսեց պատմել առաջին հանդիպած գետաշենցին՝ Ֆրիդոն Ջավադյանը:- Ապրիլի 30-ին, առավոտյան ժամը 7:00-ին, գյուղի վերեւի մասից ներխուժեցին օմոնականները, ներքին կորքերի հետ: Մենք չէինք իմանում թե ինչի էին եկել: Եկան եւ շներով սկսեցին խուզարկել: Գյուղի միջով գետ է հոսում, անցան գետի մյուս կողմը, մոտեցան մի 81 տարեկան մարդու՝ Հախումյան Հովհաննեսին, ճակատին խփեցին ու տեղում սպանեցին:

Մի քիչ փախել հեռացել էինք, երբ մեր տանից ծուխ բարձրացավ, մտել էին տուն, ամեն ինչ թալանել ու տունը վառել: Ամբողջ ժողովուրդը հավաքվել էր Գետաշենի կենտրոնում: Չորս ուղղաթիռ շարագույժ պտտվում էր վերեւում: Զինվորներն ու օմոնականներն ամեն կողմից լցվեցին գյուղ, մինչեւ կենտրոն հասնելը 17 մարդու խփեցին, որոնց մեջ էին հայաստանցի տղաներից մի քանիսը: Առաջնորդին՝ Թաթուլին էլ խփեցին, որը 14 բանակայինի ու օմոնականների իրենց զրահամեքենաներով հասցրել էր գերի վերցնել: Գյուղից պատանդ տարան 50 աշխատավոր տղամարդու, սկսեցին թալանն ու հետ քաշվեցին: Օմոնականները թալանում էին, իսկ կորքը նրանց հպատակված հետեւում էր: Եթե օմոնականներն ուզում էին դաժանաբար շարշարել (դանակով ծակում՝ էին, կացնով խփում), այդ ժամանակ միայն կորքն ասում էր՝ «չի կարելի»: Եկան, հարեւանիս գլխին կացնով խփեցին ու սպանեցին տեղում: Ջորքն ու օմոնը կեսօրի մոտ ժամը մեկին դուրս եկան գյուղից, ժամկետ դնելով, որ 28 ժամում հեռանանք, թե չէ մեկ կկոտորեն: Գյուղը կրակի ու ծխի մեջ էր: Գյուղերում 18 հոգի էին սպանվել, Մարտունաշենում երկուսին ճգմել էին տանկի տակ: Որոշվեց կանանց ու երեխաներին դուրս հանել, որովհետեւ ուրիշ բան էր սպասվում, անտառը կորքերով լցված էր, խուզարկում էին...»:

«...Հավաքվեցինք մի ապահով տան մեջ,- պատմում է 9-րդ դասարանցի Նաիրան,- վինվորները եկան թե՝ դուրս եկեք, դուք ֆիդայի եք թաքցնում, թե՝ մենք խղճով ենք, իսկ հայ գրոհայինները սվինները մտցնում են երեխաների փորը խառնում, մենք էլ այդպես կանենք: Թաթուլ Կըրպեյանին եւ Արթուրին սպանեցին բանակցությունների գնալիս: Հրաշը պատի գլխից ելնում էր, որ իբր գնա ապատի, կրակեցին...

Մի կին էլ կանգնել էր տղամարդկանց առաջ ու ասում էր. «դե, ինձ էլ կրակեք, իմ երեխաներին իմ առաջ ինչի՞ եք սպանում...»: Մի ծեր մարդ կար գյուղում, անունը Մելսիկ, գլուխը կտրել գցել էին շան առաջ, շունը քաշքաշ էր անում տիրոջ գլուխը... Գյուղը ողբում էր Թաթուլի մահը...»:

Ստեփանակերտ
Մեփ. թղթ.